

13437

891.99

U-35

1907

Ես մի անգամ լսեցի զրադարանի զըքի խօսակ-
ցութիմը փողըիկ երեխայի հետ և զրի առայ.

Գիրքն առում էր երեխային. «Սիրելի մանուկ,
ինդրում հմ ինձ չվերցնես կեղասոս ձեռքերով, ևս
սաստիկ կամաչեմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մաքուր
չտեսնեն: Մի թող ինձ անձրես տակ, չք որ զրքերը
նոյնպէս փոքրիկ երեխաների նման հեշտութեամբ կը-
մրսեն: Ինձ վրայ չգրես կամ նշան չանես ոչ զրչով
և ոչ մատիսով, գա շատ տգեղ է: Կարգալիս էլ ար-
մունկդ մի գնիր երեխա, սաստիկ ցաւեցնում ևս, նոյն-
պէս բաց մի ձգիր ինձ երեխս վրայ, քեզ էլ դուք չի-
գայ, երբ նոյն ձեռք հետզ վարւեն ուրիշները:

Թերթիրիս մէջ մի գնիր ոչ մատիս և ոչ էլ որ
և է հաստ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետեւ գը-
րանից կրփչանայ իմ կազմը:

Եթէ կարգուր վերջացրել ես և վախենում ես
կարդացած տեղը կորցնել, եղունկներով նշաններ մի
անիր, այլ պահիր իմ մէջ մի թուղթ կամ գեղեցիկ
ժապաւէն, ծուծկիր ինձ և գիր նախկին տեղս: Մի մո-
ռանար, որ քեզանից յետոյ ես գեռ շատ երեխաների
էլ պիտի այցերեմ:

Չգնիր ինձ մնալ մաքուր և գեղեցիկ:
ես կօգնեմ քեզ լինել երջանիկ:

50078
С.И.
443.0.0
5.8

Настоящая пьеса подъ заглаві-
емъ «Лео Дараянъ» разрѣшена На-
мѣстникомъ Е. И. В. на Кавказѣ для
представленія на сценахъ края. Іюнь,
1906 г. Тифлисъ.

И. о. Предсѣдателя Комитета
А. Кишишевъ
Секретарь Н. Меликъ-Нубаровъ.



ЦИАРЪ ВРЪУСЕВЪ
и упраша
въсъсъ

Штурманъ Л. Кирсановъ
Генералъ Франклина Гаттона

Գ Ա Ր Ծ Ո Ղ Ն Ե Բ

ԼՕՏԱՐ ՀԵԼՎԻՆԳ.

ԱԼՄԱ ՀԵԼՎԻՆԳ.

ԼԵՕ ԴԱՐՌԱՅԵԱՆ.


ԱԼՔԻՍԱՆԴՐ ԱԼԱՆԵԱՆ.

ԴԻԼԻ.



Անցքը պատահում է Կովկասի մի գերմանական գաղութում (կօլոնիա):

Եղանակը չ բարձրացնելու պահպանությունը գումար է պարագաների արժեքի վեցական մասը:



ողմի մասնաւութ է և ուժակայութ պահանջվում է (RHOLOM) և անգույքը մայնական

Ծանօթ.—Նախաբեմբ սիսակմամբ նեղ է գը-
տուած, պէտք է ընդունել ընդհակառակը.

զա զբանազար օձ պէղոք զաշիր Ֆի և Ա
սիսիւմ այժմացաւ յըրման է և ազնիւարրացիք
-տաճառ խոյնածամբ զա և նորդամանչող զա
-արու և ու սուզածաման ու միրունոր զա զ
ման շահնութիւն է և է զա զա զա զա զա զա
-զա զա
վարագոյրը բարձրանալիս Աէօն բնած է,
նրա նիհար ու գունատ դէմքը արտայատում
է հողելկան մորմբ նրանից ոչ հեռու կանգնած
են Լուտարն ու Ալման:

ԱԼՄԱՐ.—Նա արդէն քնած է, խեղճ...

ինչ յուսահատական է նրա դէմքը:

ԼՈՏԱՐ.—Ալմա, ևս կասկածում եմ...

վերջանուու է...

ԱԼՄԱՐ.—Ա՛խ, այս, բժիշկը այսօր ինձ բո-
լորովին յուսահատեցրեց:

ԼՈՏԱՐ.—Ափսոս Դարայնան, բայց այսուա-
մենայնիւ խնամիր սրան, յանուն ձեր պաշ-
տած գեղարուեստի, վերջապէս, ի սէր մեր
մեռած որդու... Խնամիր, չէ որ սա քո տան-
ջուած արուեստակիցն է:

ԱԼՄԱՐ.—Օ՛, ի հարկէ, և ինչպէս կարելի է
սառնասիրտ վերաբերուել դէպի այս մեռ-
նող տաղանդը, մտածելն անդամ սարսափեն

թէ է, թէ պիտի կորչի լէօ Դարայեանը, որ դժբաղութիւն է ուսնեցել մաշուելու այնպիսի շրջաններում, ուր չգնահատելով անձնուրաց գործողին յուսահատեցնում են և սպանում... և սա առաջինը չէ, ոչ էլ վերջինը նման հայ գործիչների կեանքը ուղղակի մի մորմոքիչ ողբերգ է, պէտք է կարդաս թէ Բնչ է զրում սա սեփական օրագրում իւր դառն օրերի և հասարակական անտարբերութեան մասին:

Լէօ (Քնի մէջ).—Ես... ձեր մէջ եմ... տանջուում...

ԼՕՏԱՐ.—Նա ցնորուում է... խոկոյն կարթանայ... հեռանանք այստեղից:

ԱԼՄԱ. —Այո, հարկաւոր չէ խոռվել նրա հանգիստը, գնանք:

ԼՕՏԱՐ.—Սպասիր, դեղը ընդունեց:

ԱԼՄԱ. —Այո... բայց դէ իդուր է արդէն այդ բոլորը:

ԼՕՏԱՐ.—Ալմա, Ալմա զգոյշ, յամենայն դէպս գու միշտ որոշ ժամանակին տուր նըստան դեղեր, նաև կարող է բան հասկանալ:

Լէօ (Քնի մէջ).—Դարայեանին այդպէս չեն

կանչում... թողէք... ես զարշում եմ մարդկանցից...

ԱԼՄԱ. —Ե՞կ... հեռանանք...

Լէօ (Քնի մէջ).—Ճիւազներ! դուք չէք յարցում. . նոյնիսկ... մերձ ի մահ... ընկած... հիւանդի թուրութիւնը... թողէք... ինձ...

ԱԼՄԱ. —Մայր Աստուածիածն...

ԼՕՏԱՐ.—Թող Աստուած օգնէ սրան... խղճալի է, չափազանց խղճալի... (Գնում է. Աման հետեւում է նրան):

Լէօ (Ցանկարձ վեր թոցիլով).—Երկչուտ Դարայեան, միթէ արդէն գողում եմ, միթէ սառում եմ, էլ չէ եռում արիւնս, միթէ էլ չէ բարախում սիրաս .. ծմիթէ այսպէս հեշտ է բաժանուել տանջալից կեանքից... ոչ, ինձ անկարող է յուսահատեցնել հոգեկան այս դառն կոկիծը, ես կեանք եմ ուղում, ապրել եմ ուղում... ուղում եմ դարձեալ տանել հայ գործողի ծանը տանջանքի խաչը... վկայ է այն Աստուածը, որ այսքան խիստ է խաղում ինձ հետ... (հայեացը սեւենելով բաց պատուհանից դէպի դուրս). Ա՛խ, որքան լոյս է այնտեղ և որքան ա-

զմատ... լոյս և ազմատ... ահա այնտեղ ծիս-
ծաղում են ազմատ մարդիկ, ծիծաղում ու
երգում, իսկ ես լալիս եմ այստեղ մենա-
ցած, հիւանդ... յուսախար... իմ յամառ սի-
րուց այսքան ինեղացած... տուէք ինձ մի
կայծ կեանքի կրակից եթէ կրակէ կեանքը
ծաղրածու, տուէք մի կաթիլ, եթէ ջուր է
նա, տուէք ինձ կեանքից ինչ որ կամենաք,
մի հիւէ միայն, գէթ մի սոսկ հիւէ... ես
ուզում եմ մի վիրջին անգամ ենել թատ-
րոսի բեմը, խրոխտալ անձկացած, մի քանի
ժամ էլ ապրել իմ սիրած աշխարհում և
սլատմել ամբոխին, թէ ինչպէս է մեռնում
տաղանդը. (դոդախիլ յուզմունքից). Փրառու Ալ-
մա, կարեկից Փրառու. (նայում է շուրջը տիս-
նում է նա ձկա): Այս երկի ձանձրացել է
նա... (նորից պարկում է) և սակայն որքան
յամառ եմ ես, յիմարութեան աստիճան յա-
մառ... և ինչ եմ ստացել ես իմ երկար ու
դառն տառապանքի փոխարէն. անտարբե-
րութիւն, արհամարանք, քաղց, վիշտ, ամօթ
ու անէծք, պարտքեր, պարտքեր և վիրջա-
պէս թռքախտ.—ուրեմն ինչնու, ինչնու ա-
ռողջանալ, որպէսզի տառապել նոր կեանքի

նոր հոգաերթվ) և ինչպէս լինելու իմ յետա-
զայ կեանքը... դժոխք... այս դժոխք... Հայր
Լոտար, Փրառու, բարեկամներ, (ուժգին) լսե-
ցէք... (մոնում են Լօտար, և Ալմա, նրանց ե-
տեւից Վիլին բերում է սուրբ մատուցարանով եւ
զուրս է զնում): ուստ քարտոր մենունու
մաս եւ նուխորդ զար ձաւոյ ուժասա-
գարսա մաշխանց Պ Ամանթառակի փառ
ահամ ու նունանան նուռ ուստ ցուռ
ԼէՕ.—Այս մայր Ալմա, և գուք բարի
Լոտար, սիրելի կարեկիցներ, կացէք ինձ
մօտ, խնզրում եմ, ես վախինում եմ այս-
տեղ միայնակ,.. այսինքն չեմ վախինում...
գուք նեղանում էք ինձանից:
ԼՕՏԱՐ.—Հանգիստ, բարեկամ, զգաստացիր,
միթէ մեզ չես ճանաչում:

ԱԼՄԱ.—Ապա ինչո՞ւ մենք քեզ քաղա-
քից այստեղ բերինք, սիրելիս, որպէսզի ա-
ռողջանաս այստեղ օդով և կազդուրիչ կի-
մայով.

ԼէՕ.—Այս, շնորհակալ եմ, շատ լաւ ա-
րեք, որ տեղափոխեցիք ինձ այստեղ, ես
գլխաւորապէս ուրախ եմ նրա համար, որ
մի փոքր ազատ եմ պարտատէրերիս սպառ-

նալիքներից ես ամեն գիշեր երազում տեսնում
եմ նրանց խոժոռած աչքերը և զարհուրում,
նրանք իմ քունս անդամ իմանգալում են ան-
ողոք... և գիտէք, որքան անտանելի են ինձ
համար այս սև օրերը, նրանք ծաղրում են
կարծէք իմ ցաւը, իմ լացն ու անէծքը... և
անցնում են դանդաղ, շատ դանդաղ... բայց
ասացէք, զուցէ զուք վրդովւում էք իմ ան-
չափ վստահութիւնից, ճշմարիսն ասացէք,
զուցէ զուք զգուում, ձանձրանում էք ինձաւ-
նից յանուն ձեր վաղամեռ Արնօլդի հոգու
անդորրութեան:

ԼՕՏԱՐ.—Ի՞նչ օտարօտի խօսքեր...

ԱԼՄԱՐ.—Դու ինքդ քո հանգստութեան
թշնամին ես... մի մտածիր, դաւակս, թէ
ի՞նչ ես ասում, միթէ զու այդքան շուտ
մոռացար քեզ և ինձ, ինչպէս զու չես կա-
ռողանում հասկանալ իմ սիրտը... արտիստ...

ԼՅՈ.—Ներիր...

ԱԼՄԱՐ.—Այն գիշեր, երբ ես առաջին ան-
գամ տեսայ քեզ քաղաքի մեծ թատրոնի
բեմի վրայ, ես մի անչափ սէր զգացի գէ-
պի քեզ, մայրական մի անհուն զութ ու
գորսի, այդ ես չեմ կարող արդէն բացատ-

րել, այդ գիշեր ես մօռացայ իմ իսեղձ Աը-
նօլդին, այն հերոսը՝ որին զու տաեղծելով
ներկայացնում էիր մեղ քո տաղմանդի ոյ-
ժով, ինձ յիշեցրեց իմ զուարդ անցեալի,
ինձ թւաց, թէ զու Արնօլդն ես, որ հեկեկում
ես բեմից «մայրիկ... մայրիկ...» և ես, կար-
ծես զայ իմ մեռած որդուն, մինչ այդու...
մինչ այդ յուզող ու անմօռանալի գիշերը
զու միը տանը սոսկ մի այլազգի գիշերու-
թիկ էիր, իսկ այնուհետեւ դարձար իմ խըդ-
ձուկ որդին:

ԼՕՏԱՐ.—Ճշմարիս է, զու պիրելի ես մեզ
համար... խեղձ, խեղձ Արնօլդ, (որդուն գի-
մում է, դէպի լուսը և մնում է երեսը պահած
մեռերում):

ԱԼՄԱՐ.—Ա՛խ...

ԼՅՈ.—Ներիշեր, զուք յիշեցեք ձեր կորած
որդուն... բայց մի տիրեր, նա երջանիկ է
հղել:

ԱԼՄԱՐ. (գրկալով ԼՅՈի զոււիպ)՝—Ո՛չ, մենք
չենք թողնիր քեզ մեռներ, մեր խեղձ յուա-
խաթուած բարեկամն... (համբաւութեամ է նրա
մակատը եւ հեկեկում) **ԱՐՆՈԼԴ.**...

ԼՕՏԱՐ.—(Թափահարելով ձևաքր)՝—Արնոլդ...

ես չեմ կարող տանել այս պատկերը (զնում
է աչ կողմի սենեակը):

Լէօ.—Դուք լալի՛ էք... կեցցէ ձեր գու-
թը...

ԱԼՄԱ.—Ես ստեղնում է Եփոխ, ծածկում է
մեջքը եւ սուրճը տալով նրա ծեռքը նստում է մօ-
տիկ).—Խմիլ սիրելիս...

Լէօ.—Ենորհակալ եմ.. (մի կում է անում):
այս շատ շնորհակալ եմ... ինչու դու ինձ
այդպէս ապշած ես նայում... միթէ իրօք
ես ծաղրելի եմ:

ԱԼՄԱ.—Անիրաւ Լէօ, միթէ մայրական
սիրոք կարող է արհամարհել:

Լէօ.—Բայց ինձ արհամարհեցին իմ կար-
ծրասիրա ծնողները. . «ըմբոստ, խեղկա-
տակ... զուրս կորիր մեր տանից»... աղաղա-
կեցին նրանք և զուրս փակելով իմ առաջ
անիծեցին... այս անիծեցին... նրանց կար-
ծիքով մի անառակ յիմարութիւն էր իմ
հրեշտաք սէրը դէպի այն արուեստը, որը
չէր բաղմապատկում նրանց մեռած զումա-
րը... նրանք չ'ընդունեցին ինձ ինչպէս հար-
կաւոր է ընդունել սիրով խենթացած ար-
տիստին յուսահատեցրին, չ'զնահատեցին ան-

դամ իմ գերմարդկային տանջանքը... Ա՛խ,
նրանք մաշեցին... կիրան... ապանիցին իմ
սիրոք...:

ԱԼՄԱ.—Ես զիանմ, քեզ շատ վշաեր են
հասցրել բայց դու դարձեալ համբերիր, իմ
կարծիքով ամեն տանջանք վարձապատում է
հոգեկան սիրով, կառողջանաս Ասպուծով և
այսուհետեւ կ'զործես տպահով... և քեզ կ'օգ-
նեմ, կ'օգնեմ ասում եմ:

Լէօ.—Դու երկավայիր, մայր Ալմա, իմ
դրութիւնը, երբ ես խաղում էի իմ վերջին
պիէսան... օհ, այն մի քաղցը և խորհրդաւոր
գիշեր, էր, մուզիկան գորդացնում էր թատ-
րոնի կամարները, նրա յուզող ու աղմկա-
լի վայլը վառում էր ինձ մի անսահման
ոյժ ու հրձուանքով արտայայտելու իմ ըս-
տեղծած միատիկ հերոսին, ամբողջ թատ-
րոնը զարգաբուած էր խառնակ, ցիրուցան,
գոյնզգոյն լոյսերով... պատրաստական սե-
նեակում մենացած եմ իրար յետկից գա-
տարկում էի օղիով լի գաւաթները... ես
չէի ուզում խմել, այլ ուզում էի ինձ մօ-
ռանալ, ես զգում էի ինչպէս հպարտանում
էր իմ լեցուն հոգին մի ախուր հրձուանքով

և ինչպէս կատաղի ոչը էի ուածում դէպի
ուրմայիտյած գեղարուեատը... երբորդ զանգը
թնդեցնում է իմ սիրտը և ես ըեմ եմ մսմում,
անմիտ «կէցցէ»-Ն խսկոյն զլրդում է զահլի-
ճում, որը նոյնքան ուրախալի է թուռմ ինձ,
որքան անտեղի, և ես մկում եմ խաղալ, խօսել
իմ սրտից, իսկ ժողովորդը աղաղակում է
«կէցցէ»... կէցցէ...» հացի փոխարէն կէցցէ...
Այս այն գիշերը... նողկալի այն գիշեր սառ-
մրաց հոգին հարազատ հօրս մոռյլ աչքերից
ուռ խորտակեց...
ԱԼՄԱ. — Անուժենու մայր Ալմա, ես գարձայ
չափաղանց դիերազրդիու և սիերիմ դէպի ա-
մենքը, մկայ հիւծել ջղային ծանր հիւան-
դութեամբ և հրեշտած անիծել ոչըն ու
հաւատը, այսուհետև լալ մկաւ իմ սիրտը
այդ սիրելի և տաժանական արուեստի պա-
տուհասից խեղճացած... անցնում էին օրերը
անկմիտ... պաղտկալի... և իմ խեղճ կեանքի
տխուր, միօրինակութիւնը հասցնում էր
ինձ ծայրահեղ յուպահատութեան... և ես
մկանցի խմել... խայտառակ չափով... օ ինչ
ողէս էի ես խոյում... արդէն ինձ հա-

1001
9599

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱ
ՊՈՂԱԿԱՆ ՊՈՂԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒԹԻՒՆ
7 / 11. 1922
մար ոչ մի արժէք, ո ոչ ուղի նշանակութիւն
չունէր այն հասարակութեան կայութիքը, որն
այնքան չարտինդաց էր, պազ ու սաստղը...
ինչ եմ այժմ ներկայացնում ես ինձանից:
ԱԼՄԱ. — Մի գժրախտ արտիստ...

ԼԷՕ. — Ձմարիտ է, ես արտիստ էի,
ես էի, որ Մելիքօձենայի տաճարի ամբիոնից
մոնչում էի կատաղաբար, ես էի անիծում
նենգաւոր մարդոց գծուծ հոգին .. ու
նեկեզում սիրոյ ցաւով անձկացած, ես
էի հրճուում ազատութեան տեսչերով... մայր
Ալմա ես էի որ խանգարելով խղճի
խոր քունը կարծը սրտերից արցունք էի
քամում... բայց ախ... ցաւակցաբար բռնի
թատրոն բերուած գեղարեաց հայր բոպէա-
բար էր միայն զգում կեանքի էական միտ-
քը և այսուհետև նորից արտասուք շորթում
իւր խեղճ եղբոր մարած աչքերից... որքան
յամառ էի, ամբողջ թարմ ոյժերս ես վատ-
նեցի, էլ արիւն չմնաց իմ յոդնած երակնե-
րում... բայց ինձ չգնահատեցին, երբէք
չգնահատեցին:

ԱԼՄԱ. — Բայց չէ որ գու այսուամենայ-
նիւ մացիր քո քամբաղդ կոչման բարձրու-

թեան վրայ. այդ արդեն բաւական է, ոռչ
նորից կ'զործես:

ԷՀՕ.—Իսկ ցաւը, յուսահատեցնող կարիք-
ները, թուլա՛թիւնը... .

ԱԼՄԱՆ.—Ես կարծում եմ պիտի ընտե-
լանալ գրանց, բոլոր մեծ մարդիկ, զաւակս,
տարել են սիրոյ ծանրութիւնը:

ԷՀՕ.—Իսկ եթէ ես անզօր եմ, հիւանդ...

ԱԼՄԱՆ.—Ի հարկէ, այդ գէպքում քեզ
պէտք է օգնեն նրանք, որոնց ծառայել ես
դու անձնուէր:

ԷՀՕ.—Ա՛խ իսկ եթէ նրանք ինձ չեն օգ-
նում, եթէ նոյնիսկ ծաղրում են իմ վիշտն
ու զայրոյթը... այն ժամանակ...

ԱԼՄԱՆ.—Այն ժամանակ...

ԷՀՕ.—Դուք լուսմ էք... ախ հասկանում
եմ, այն ժամանակ մնում է միմիայն մի ելք—
մենել դրանից դիւրին էլ ոչինչ չկայ ինձ
համար:

ԱԼՄԱՆ.—Բաւական է. մի ասիր, դու արիւ-
րեցնում ես ինձ:

ԷՀՕ.—Միթէ ես մեղաւոր եմ, որ անզօր
եմ մարել իմ թշուառացնող սիրոյ կրակը...
միմիայն մէկ 100 ըուբլի նուիրեցին ինձ

աղքատ յարգողներս, և այն էլ անտանելի
աղմուկով «100 ըուբլին առանց քրտինք
թափելու վատնեց այդ երեսը սափրած լա-
կոտը, ինչ հարկաւոր է նրան աւելորդ
ծախսեր անել բժշկուելու համար, նա կը
մեռնի»... այսպէս ասացին ոսկի մշրող հը-
րէները... միմիայն մէկ 100 ըուբլի արժէր
իմ ճիզը, ձայնը, իմ կեանքն ու կուրծքը...
ինչու ինձ չեն միմիթարում գէթ այցելու-
թեամբ, ինչու չեն հետաքրքրում իմ տա-
ռապանքով, գէթ թող չծաղրեն իմ հոգե-
կան թուլութիւնը... գէթ հանգիստ թող-
նեն... Զէ որ ես արիւն եմ վատնել:

ԱԼՄԱՆ.—Բաւական է, թշուառ...

ԷՀՕ.—Այն թշուառ եմ ես, իսկ հայրա-
կան գութը... հայրս... նրան էլ չի ազդում
իմ վերջին յուսահատական աղերսը, նա գեռ
իւր թունաւոր նամակներով ցաւեցնում է իմ
հոգին... (մոնում է գիլլի).

III

ԳԻԼԼԻ.—Գրառու, ուրսը մի հայ պարոն

կամենուն է տեսնել հիւանդին—նա քաշաքից է եկել:

ԱԼՄԱՆ. — Ո՞վ կարող է լինել, Լէօ:

Լէօ. — Պարտքատէր, քրառու, պարտքատէր:
Գարձեալ պարտքատէր. մի ինչ անեմ ես...

ԱԼՄԱՆ. — Դու մի վրդովոփր, ես նրան
կ'պատասխանեմ: Վիլի, ներս խընդրիր (Վիլին գնում է).

Լէօ. — Ես չափազանց խղճում եմ ինձ...
ինչ սոսկալի մահ է այս, մէկը գնում է,
միւսը գալիս... Աստուած իմ, ես հանգիստ
եմ ուզում... հանգիստ:

ԱԼՄԱՆ. — Դու կարող ես կատարելապէս
հանգիստ մնայ, ես կիսում քո փոխարէն:

Լէօ. — Թող նա ինձ ոչինչ չ'արցնէ, ես
լաց կինեմ... պաշտպանիր ինձ, մայր
Արմա:

ԱԼՄԱՆ. — Այս դու հանգիստ ննջիր...

Լէօ. — Օքնանք ձեզ, անսահման օքնանք.
(Ընկնում է զարհուրելի մոքերի մէջ մըտ-
նում է Ալմանեան):

III

IV

ԱԼԱՆ. (Դոներում). — Բարե ձեզ, տիկին:

ԱԼՄԱՆ. — Բարե... ինդրեմ նստեցէք...

ԱԼԱՆ. (Նստելով պրասեղանի մօտ). — Ծնոր-
հակալութիւն, ես շտապում եմ... այստեղից
անցնելու եմ ուրիշ գիւղեր ապառիներ
ժողովելու... իսկ պարոն Պարայանը քննած է...

ԱԼՄԱՆ. — Սյո, ինչպէս տեսնում էք, իսկ
մեմ հետ պատիւ ունիմ խօսելու, պարոն:

ԱԼԱՆ. — Ես Թիֆլիսի երկրորդ կարգի վա-
ճառական Սամսոն Բաղրամեանի առևտրա-
կան գործերի կառավարիչն եմ, իմ ազգա-
նունս է Ալէքսանդր Ալանեան, պարոնս
Թիֆլիսում հոչակւած է իւր բարձր գիրքով
և կարողութեամբ, ես նրա համար շատ
մեծ գործեր եմ կատարում, համարեայ թէ
նա ինձանով յառաջադիմեց... տոկուն մարդ է:

ԱԼՄԱՆ. — Սպասեցէք, ձեզ նա է ուզարկել
մեզ մօտ:

ԱԼԱՆ. — Այս, այսիքն ոչ թէ ձեզ մօտ,
այլ գերասան Պարայանի մօտ, նա ինձ
պատուիրեց վիրջին և վճռական պատաս-

խան առնել նրանից թէ կամենում է արդեօք մինչև առաջիկայ շաբաթ վճարել իւր պարտքը, թէ ոչ... եթէ ոչ այն ժամանակ մենք կ'բողոքենք իւր մուրհակով...

ԱԼՄԱՆ.—Ե՞րբ է վերցրել այդ գումարը:

ԱԼԱՆ.—Կարծեմ անցեալ ձմեռ, այն, այն... երբ նա պառկած էր հիւանդանոցում, Բաղրամեանը այցելում է նրան և առձեռն ծախսերի համար մուրհակով տալիս է մի կատինկայի հարիւրանոց:

ԱԼՄԱՆ.—Քրիստոնեաց է այդ մարդը...

ԱԼԱՆ. (Ժպտալով).—Այդ ինչ հարց է, տիտին, ի հարկէ քրիստոնեայ է և այն էլ հայքրիստոնեայ:

ԱԼՄԱՆ.—Ապա ի՞նչու այդ հայքրիստոնեան չէ խղճում իւր տառապեալ եղբօրը... միթէ կարելի է այդ աստիճան հրեշտանը:

ԱԼԱՆ.—Այդ իմ գործը չէ, տիկին, վաճառականի համար կէս կոպէկն էլ հաշուի մէջ նշանակութիւն ունի, վաճառականը պարտաւոր չէ ողորմութիւն տալ, երբէք...

ԱԼՄԱՆ.—Դադարեցէք, միթէ բառական չեն սրան իւր սկ օրերը, միթէ դուք սպառել չգիտէք:

ԱԼԱՆ.—Մենք արդէն չափազանց շատ ենք սպասել.

ԱԼՄԱՆ.—Ես ձեզ ասում եմ սպասեցէք, եթէ չէք ուզում բոլորովին կորցնել:

ԱԼԱՆ.—Մենք երբէք չենք կորցրել և չենք կորցնիր, մենք ամենախիստ միջոցներ ձեռք կառնենք. վերջապէս, միթէ մեղք չէ իմ պարոնը...

ԱԼՄԱՆ.—Ե՞մ դու հաւատարիմ կենդանի:

ԱԼԱՆ.—Դէ դուք իգուք էք վիրաւորում ինձ, տիկին, ես պարտաւոր եմ կատարելու իմ յանձնարարող պարոնի հրամանը .. այդ իմ պարտքն է...

ԱԼՄԱՆ.—Ձեր պարտքն է... դուք ասում էք ձեր պարտքն է մի այսպիսի յուսահատական ծանր գրութեան մէջ գալ աւելի նեղել հիւանդին, քան իւր ցաւը և այն էլ այդ քան բիրտ ու յանդինաբար, դուք ասում էք ձեր պարտքն է գալ մարդ սպանել:

ԱԼԱՆ.—Ապա ինչ. թողնենք, որ մեր զբամբ ուտեն զանազան ծոյլ ու մնծամիտ մարդիկ և անպատիծ մեան...

ԱԼՄԱՆ.—Դադարեց. դու ողորմելի թութակ... (մոնում է Վ. Ալլին):

ուսուցական մշրջան գումար մասնաւում
V մասնաւում

Վելլին.—Մի ոմն Սարաֆեան կամենում
է տեսնել հիւանդին...

Էջօ (Խաղովն).—Աշխ զարձեալ այդ Վամ-
պիրը... ազատեցէք ազատեցէք ինձ... ա-
սացէք ամենքին, որ Դարայեանը մեռած է
արգեն, նրան էլ չի կարելի տեսնել... (մրտ-
նում է Լուսար՝ որը մինչ այդ լսում էր նրանց վա-
րագոյների յիտելից);

VI

ԼօՏԱՐ.—Վիլի. նրանք, որոնք կուզենան
տեսնել հիւանդին, այսուհետեւ ոչ մի դէպ-
քում չ'ընդունես... հասկանում ես դու...

Վիլի.—Շատ բարի, տէր. (վնում է):

ԼօՏԱՐ. (Դառնալով Ալանեանին).—Իսկ դուք
վերադարձէք և ասացէք ձեր պարոնին, որ
Դարայեանը կ'ատածէ իւր պարտի մասին
միայն այն ժամանակ, եթք որ կատարելապահ
կառողջանայ:

ԱԼԱՆ. (Երկոտ). Իոլ ինձ պատասխան...

ԼօՏԱՐ.—Եւ ոչ մի պատասխան, սացէք
ձեր խղճալի պարոնին, որ նա այժմ մտա-
ծում է միմիայն իւր կեանքի մասին...

ԱԼԱՆ.—Չէ ոք ձեզ համար է գործել այս
տաղանդը, չէ որ դուք էք սրան հալ ու մաշ
արել:

ԼօՏԱՐ.—Միթէ հասկանում են զը-
րանք. ոսկի, նախանձ, նենգութիւն ու
կեղու... ահա դրանց ամբողջ երջանկութիւ-
նը, իսկ սիրոյ և գեղեցկութեան մասին և
չի մի հասկացողութիւն:

ԱԼԱՆ.—Ուրեմն ի՞նչ է ձեր վերջին խօսքը:

ԼօՏԱՐ.—Հեռացէք այստեղից. (Ալանեանը
խկայն վերցնում է զիխարկը). ահա ձեղ իմ վեր-
ջին խօսքը. (լուսթիւն). հեռացէք այստեղից...
(Ալանեանը շփոթուած զնում է մինչև զոմերը, մե-
տոյ յիտ է զառնումնորից մի բան ասկու) **Մարշ.**
(ծածկում է զոների յիտել):

ԱԼԱՆ.—Եթէ կայ մի Աստուած, դուք
կ'պատժուէք անկասկած:

ԼօՏԱՐ (Դէպի սեղանապաւն՝ որտեղ Վիլին բա-
ժակներ է մարրում),—Վիլի, թէյը պատրամատ է:

Վիլի.—Իսկայն պատրաստ կ'վինի:

բենք (ժամացոյցը զարկում է երեկոյեան վեցը),
Լէօ (Համարելով զարկերը), — Մէկ... երկու...
երեք... չորս... հինգ... Ա՛խ ուրբան շուտ են
մթնում օրեւը... մէկ ժամից յետոյ:

ԱԼՄԱ. — Ի՞նչ:

Լէօ. — Ճիշտ ժամի հօթին թող ամենըը
գան հայհոյելու մի դիմակ...

ԱԼՄԱ. — Ի՞նչ ես ուզում ասել...

Լէօ — Համարեայ թէ ոչինչ, սակայն ափ-
սոս, որ ձեզ երախտապարտ պիտի մեռնեմ
(պահում է գենքը բարձերի մէջ և աղա վեր կի-
նալով նստում է ապշած):

ԱԼՄԱ. — Ելդապէս ուրեմն... գու վհատում
ես արդէն իմ երկչոս բարեկամ... միթէ
արդէն անզարձ կորան քո գողտրիկ երազ-
ները (լոռութիւն):

Լէօ. — Տխուր է, տխուր...

ԱԼՄԱ. — Ես իսկոյն կ'վաճեմ քո տխուր-
թիւնը... ուզում ես, ես կ'նուազեմ քեզ
համար:

Լէօ. — Այս, բարի եղիբ մայր Ալմա (ուզում
է պարկել):

ԱԼՄԱ. — Դու կամենում ես պարկել...

Լէօ. — Բարի լոտար, մայր Ալմա, օղի, օղի
տուէք ինձ:
ԱԼՄԱ. — Ֆէր Աստուած, դարձեալ օղի:
Լէօ. — Օղի... ես ուզում եմ այրուել:
ԱԼՄԱ. — Վհաս է լէօ, միթէ կարելի է
այդքան խմել:

Լէօ. — Օղի.

ԼՕՏԱՐ. — Ինչու ես դու հակառակում,
դիմես: որ նա չի կարող դիմանալ առանց
օղի, նա արդէն փչացել է վշտից, մերժե-
լը ուշ է արդէն, տուր նրան իսկոյն:

ԱԼՄԱ. (Դիմաւութեամբ), — Սպառել է արդէն:

ԼՕՏԱՐ (Զննելով շշերը). — Այս չափազանց
շատ է խմել վերջերս: Դէ ես կերթամ զը-
նելու (զնում է):

Լէօ. — Օղի...

ԱԼՄԱ. — Իսկոյն:

Լէօ. — Շատ գեղեցիկ... իսկ գործակա-
տարը զնաց:

ԱԼՄԱ. — Այս, իմ խղճուկ:

Լէօ. Ա՛խ, Բաղրամեանը կ'բողոքէ... ան-
շուշտ կ'բողոքէ:

ԱԼՄԱ. — Անտարակոյս... սակայն դու ա-
մենեին մի վրդովուիր, մենք նրան կ'վճա-

ԱԷՕ.—Այն, ես պարկած կ'լիմ, դժուար է
ինձ նոտած նուալ:

ԱԼՄԱ. —Լաւ (բնրուշութեամբ պարկացնում է,
նրան մէջին վրայ). ես կ'նուագեմ քեզ համար
Բետխօվենի «Ֆիդէլիօ»-ից մի Allegretto և
ապա «Les adieux» սօնատան:

ԼԷՕ. —Այն նուագեցէք:

ԱԼՄԱ. —Իսկոյն... սուրբ Աստուածածին
(անցնում է աջ խորրի սենեակը, ուր դրուած է
դաշնամուրը, լռութիւն. սկսում է նուագել «Ֆի-
դէլիօ»-ից):

ԼԷՕ (լսում է մինչիւ վերջը մի տխուր հիաց-
քով. փոքր ժամանակից յիսոյ միջամաղձոտ ծայ-
նով հնուում են վերմանական աղօթատան զանգերը, որ
նրա մէջ զարդեցնում են հին ու բազցր յիշոյու-
թիւններ եւ նա խաչախբում է թոյլ բազկով). ՄԵռ-
ՆԵԼ... մեռնել... (ծիծաղում է անգիտակցարար,
որը յիսոյ փոխուում է բարձրածայն հեկեկանքի:
լռութիւն. Մտնում է Ալման սեւ ծածկոցով):

VIII

ԱԼՄԱ. —Դու դարձեալ տխուր ես, իմ խեղճ
բարեկամ:

ԼԷՕ. —Ո՛չ, ոչ:

ԱԼՄԱ. —Ենուամենայիւ ես չկարողացայ
ազգել քեզ վրայ երաժշտութեամբ... բայց
ես այսպէս զգացուած էի նուագում... ինձ
թւում էր, թէ ես գտնուում եմ մայրաքաղա-
քի թատերաբեմի վրայ և իմ սիրասուն Ար-
նոլգին տեսնում եմ գէմիս օթեակում...
(զանդիրը հնչուում են տեիի ուժեղ). Ողորմած
Աստուած զթա թշուառին, թեթևացրու-
տանջւած հոգու վիշտը... իմ խեղճ բարեկամ,
ես իսկոյն կ'գնամ աղօթատուն և կ'աղօթեմ
քեզ համար...

ԼԷՕ. —Բայց դու չ'նուագեցիր Բետխօվենի
Սօնատան...

ԱԼՄԱ. —«Հրաժեշտը»:

ԼԷՕ. —Այս, այս, աղաչում եմ մայր Ալմա,
դէ դուք տեսնում էք, թէ ինչպէս է մեռնում
տաղանդը, կացէք, նուագեցէք ինձ համար
«Հրաժեշտը»:

ԱԼՄԱ. —Դուք ուզում էք...

ԼԷՕ. —Այն այս աղերսում եմ ձեզ, դուք
վաղը կ'գնաք աղօթատուն և կաղօթէք իմ
հոգու խաղաղութեան համար... նուագեցէք:
ԱԼՄԱ. —(Գէպի երկինք). Ոխերիմ... քինա-

լի՛... (վերցնելով ծածկոցը մօտենում է դաշնամուրին, լուսթիւնք ալպարում հն զանգերը, սկսում է նուաղել, որի մնամաղձոտ մնչիւնների հետ ԱՀօն ասոյինանաբար նուաղելով անշնչացած ցածք վորւում մահնակալից, նրա հետ ցածք են թափւում սեղանի վրայ գարսուած բոլոր իրերը սփռոցի հետ միասին):

...և որոված ունեցած նմ նուանու մէջուն
հնեցոր Ա (ընկած մմ նուան ողքընը)
ու որոված անուանուն անք հաւուում
(Դաներում յայտնում են գունատուած Ալման և
Լուսարը շշերը ձեռքին, նրանց լիժեկից քավիլին
թէյ է թերում: Պատկեր):

ՎԵՐԵԳՈՅՑ



the situation, which demands the question
whether a single member of the legislature can
be considered independent. We think that a law
which gives the executive authority power
over the law does not in itself impair
the independence of the legislature.

XIII

Independent members of the legislature may be
removed by the people, leaving vacancies which
may be supplied by election.

XIV

2013

13437

